

## Տեղեկատվություն

### Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի և Ռուսաստանի Դաշնության վարչական շրջանների միջև պայմանագրա-իրավական կապերի վերաբերյալ

2005թ. Տավուշի մարզ այցելեց Կրասնոդարի երկրամասի պատվիրակությունը, մարզպետի գլխավորությամբ և Դիլիջան քաղաքում կայացավ հանդիպում տեղի Տավուշի մարզի ղեկավարության հետ, որտեղ քննարկվեցին տարբեր ոլորտի խնդիրներ և հետագա համագործակցության վերաբերյալ հարցեր

Նույն թվականին հայկական պատվիրակությունը մասնակցեց Սոչիում կայացած Միջազգային ներդրումային համաժողովին, որտեղ երկու կողմերի միջև քննարկվեցին տարբեր ոլորտներում երկկողմանի համագործակցության վերաբերյալ հարցեր:

2009թ. սեպտեմբերի 17-20 նույնպես Սոչի քաղաքում անցկացվեց 8-րդ Միջազգային ներդրումային համաժողով «Սոչի – 2009», որտեղ կրկին մասնակցեց Հայկական պատվիրակությունը: Այցի ժամանակ տեղի ունեցան տարբեր հանդիպումներ, խորհրդակցություններ երկկողմանի համագործակցության վերաբերյալ: Պայմանավորվածություններ ձեռք բերվեցին հայ-ռուսական ռեգիոնալ համագործակցությունը խորացնելու և ընդլայնելու վերաբերյալ:

2009թ. հոկտեմբերի 12-ին Տավուշի մարզ այցելեց Կրասնոդարի երկրամասի պատվիրակությունը, Կուբանի կազակական զորքերի ատամանի գլխավորությամբ: Այցը ճանաչողական էր: Հանդիպմանը մասնակցում էին նաև հայկական սիյուբքի և Հայաստանի կազակական միության ներկայացուցիչներ: Բանակցություններ տարվեցին Տավուշի մարզի և Լաբինսկի շրջանի միջև համագործակցության վերաբերյալ: Մասնավորապես հայկական համայնքի հետ քննարկվեցին համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ հարցեր:

2009թ. նոյեմբերի 24-26 Հայաստան Հանրապետություն այցելեց Կրասնոդարի երկրամասի ղեկավարության և գործարարների պատվիրակությունը: Այցի շրջանակներում նոյեմբերի 25-ին Իջևան քաղաքում տեղի ունեցավ հանդիպում Տավուշի մարզի ղեկավարության և գործարարների հետ: Քննարկվեցին առևտրա-տնտեսական և մշակութային ոլորտներում երկկողմանի համագործակցության զարգացման հեռանկարները: Առաջ քաշվեցին նաև տուրիզմի և առողջապահությանը վերաբերվող հարցեր: Նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեցին Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան քաղաքների և Կրասնոդարի երկրամասի Գելենջիկ և Գորյաչի կյուլ քաղաքների միջև սերտ համագործակցության վերաբերյալ:

2011թ. Երևանում տեղի ունեցավ առաջին հայ-ռուսական միջազգային համաժողովը, որտեղ Ռուսաստանի Դաշնության պատվիրակության կազմում էին նաև Կրասնոդարի երկրամասի ներկայացուցիչները: Համաժողովի շրջանակներում Կրասնոդարի երկրամասի ղեկավարության ներկայացուցիչները կրկին այցելեցին Տավուշի մարզ, որտեղ ծանոթացան մարզի տնտեսական ներուժին և պատմամշակութային ժառանգություններին: Հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին տուրիզմի, արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտների հարցեր: Քննարկվեցին նաև մշակութային և բիզնես շրջանակներում համատեղ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հարցեր: